

իւր գեղեցիկ գաղափարի իրականացումը մի նոր աշխատութեամբ, պ. Կոստանեանը շատ մեծ ծառայութիւն մատուցած կ'լինի հայ քանասիրութեան, եթէ ձեռնարկի գրելու և ուսն հեղինակների անուանացուցակը, որոնք ոչ միայն ճանապարհորդել են Հայաստան, այլ և գրել են հայոց պատմութեան և գրականութեան մասին, որպէս և ուսաց **АКТЫ** հրատարակութիւնների մէջ եղած տեղեկութիւնների ցանկը:

Գ. ԵճԳԻՐԵՐԽԱՆ

ՀԱՅ-ՌՈՒՄ ԲԱՌԱՐԱՆ. ԿԱԶՄԵՑ ՅԱՐ. ԹՈՒՄԱՆԵԱՆՑ

Խմբագրութիւնս ստացաւ Յ. Թումանեանի կազմած նոր հայ-ռուս բառարանի մի օրինակ: Աշխատասիրողը, որ անյայտ չէ հայ հասարակութեան իր գրական աշխատասիրութիւններով, այդ բառգիրքը յարմարեցրել է հայ աշակերտների հասակին, շեշտադրութիւններով և քերականական ծանօթութիւններով:—Վաղուց արդէն զգալի էր այդպիսի մի բառգրքի կարևորութիւնը թէ ուսանող դասի և թէ հասարակ ընթերցող ժողովրդի համար ուսն լեզուն ուսանելու գործում և այդ ծառայութիւնը իւր նոր աշխատութեամբ բաւական բարեխիղճ կերպով կատարել է պ. Թումանեանը:

Յանձնարարում ենք այդ գիրքը հայ աշակերտներին և ընթերցող ժողովրդին, իբրև ներկայումս եղած բառարաններից յարմարը թէ ըստ ծաւալին, թէ ըստ գնի և թէ ըստ բովանդակութեան:

Հայ

ՄՏԱՑՈՒՄԻ ԳՐԲԵՐ

Կ. Կոստանեանց. Հայագիտութիւնն Արևմտեան Եւրոպայում, համառոտ տեսութիւն և գրացուցակ. Թիֆլիս 1910 զ. 1 ու.
Գարբ. Սունդուկեանց (նոյն և Համմաւ.) Սէր և ազատութիւն, կատակ. հինգ արարուածով. Թիֆլիզ 1910 զ.